շրջաններում և հրդեհում հայ գիւղերը, գանազան անպատասխանատու խմբակներ վերջ չեն տալիս իրենց գրգռիչ ընթացքին և կամենում են պառակտում առաջ բերել երկրի մէջ, առանց հաշուի առնելու, որ ամէն մի խլրտում առաջ կը բերէ անիշխանութիւն ու պարենաւորման սուր տագնապ և կը զրկէ ժողովուրդը ապրուստի միջոցներից:

Քաղաքացիներ՛, Հայաստանը կարիք ունի հանգստի և համերաշխութեան. ո՛չ մի յուզում, ո՛չ մի խլրտում—ամէն ոք պէտք է գտնուի իր գործի և պաշտօնի գլխին: Զինուած պարլամենտից ստացած արտակարգ լիազօրութիւններով՝ կառավարութիւնը դիմում է ձեր քաղաքացիական գիտակցութեան և հրաւիրում ամենքիդ, հայ ժողովրդի գոյութեան այս ճգնաժամային վայրկեանին, համախմբուել կառավարութեան շուրջը, որի նշանաբանն է՝ Հայաստանի անկախութեան և ազատութեան պաշտպանութիւնն ու ներքին դեմոկրատիկ կարգերի ամրապնդումը: Այս նպատակներն իրագործելու համար կառավարութիւնը չի խնայի և ո՛չ մի ճիգ, և նա կը յաղթէ ձեզ հետ և ձեզ համար:

Նախարարապետ և արտաքին գործերի նախարար՝ Հ. Օհանջանեան
Զօրական և ներքին գործերի նախարար՝ Ռ. Տէր-Միհասեան
Գիւղատնտեսութեան և աշխատանքի նախարար՝ Ս. Վրացեան
Ֆինանսների և արդարադատութեան նախարար՝ Ա. Գիւլխանդանեան
Հաղորդակցութեան նախարար՝ Ա. Զամալեան
Հանրային կրթութեան և արուեստի նախարար՝ Գ. Ղազարեան
Խնամատարութեան և վերաշինութեան նախարար՝ Ս. Արարատեան

Միևնոյն ժամանակ յայտարարուեց բոլոր դաշնակցականների ընդհանուր զօրաշարժ: Ամէն կողմ ուղարկուեցին դաշնակցական յայտնի գործիչներ լայն լիազօրութիւններով: Ամէն տեղ սկսուեցին կազմուել կամաւորական գնդեր: Ալեքսանդրապոլը վերադրաւելու համար կազմուեց առանձին մի զօրամաս, որի գլուխ դրուեց ժողովրդական խմբապետ Սեպուհը: Արագութեամբ շարժման մէջ դրուեցին և կանոնաւոր զօրամասերը: Հիմնուեց արտակարգ դատարան, և, առհասարակ, երկիրը դրուեց արտակարգ վիճակի մէջ: Կառավարութիւնը յայտնաբերեց բացառիկ եռանդ և կարճ ժամանակում ստեղծեց հասարակական բարձր տրամադրութիւն:

Հասարակական կարծիքը ամբողջապէս վաւերացնում էր կառավարական քայլերը: Քաղաքական կուսակցութիւնները, պետական և տեղավարական հիմնարկութիւնները, հանրային կազմակերպութիւններն ու անհատ քաղաքացիները իրենց գնում էին կառավարութեան տրամադրութեան տակ: Նմանը չեղած ոգևորութիւն ու եռուզեռ էր սկսել մայրաքաղաքում ու գաւառներում: Հայ սոցիալ-դեմոկրատների Հայաստանի բանւորներին, գիւղացիներին և քաղաքացիներին ուղղած մայիս 14-ի կոչը հետևեալ ձևով էր արտայայտում այն օրերի հասարակական տրամադրութիւնը:

«Պատահեց այն, ինչ ամենից քիչ սպասելի էր և ամենից շատ դատապարտելի:

Բազուի քաղաքական կոմեդիան վերածուեց Ալեքսանդրապոլի ողբերգութեան. խլամական խարուսիկ կոմունիզմից նուաճուեց ստրկամտօրէն հայկական բերդը, հայութեան որբանը: